ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Ռ Ե Կ Տ Ո Ր

Երևան - 0028, Կիևյան 8,
☎ 269 259
Էլ. փոստ – info@paara.am

«11» «*սեպտեմբերի*» 2026թ.

№ 12/926

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Իսպիրյան,

Ի պատասխան Ձեր՝ 2026 թվականի հուլիսի 27-ի գրության՝ ուղարկում ենք ԼՈՒՍԻՆԵ ՎԱՍԻԼԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻ՝ «Ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող սոցիալ-հոգեբանական գործոնները» ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը:

ՌԵԿՏՈՐ՝ **Խ. ՂԱԶԵՅԱՆ**

Կատ.՝
Հոգեբանության և քաղաքագիտության ամբիոն

Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

տեխնիկական գիտությունների թեկնածու,

դոցենտ Խ. Ղազեյան

11/09/2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՍԻԼԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻ

ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ

ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» **մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՍԻԼԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻ՝ «ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ» խորագրով ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի նիստում (26.08.2026թ., արձանագրություն N 7): Ամբիոնի նիստին մասնակցում էին հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Լ. Հ. Պետրոսյանը, ք.գ.դ., պրոֆեսոր Մ. Մարգարյանը, հ.գ.թ., պրոֆեսոր Ռ. Վ. Աղուզումցյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Հ. Պողոսյանը, ք.գ.թ, դոցենտ Մ. Գ. Մարգարյանը, ամբիոնի դասախոսներ Ա. Ղուշչյանը, Լ. Գրիգորյանը, գործավար Ս. Յ. Ավագյանը:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ Ժամանակակից աշխարհաքաղաքական և անվտանգային սպառնալիքների սրընթաց փոփոխությունների պայմաններում կարևոր է և անհրաժեշտ դառնում ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարման հիմնախնդրի ուսումնասիրությունը: ՀՀ Զինված ուժերում (ԶՈՒ) կառավարման արդյունավետությունը որոշվում է ոչ միայն ժամանակակից նյութական միջոցների օգտագործմամբ, այլև ստորաբաժանումների բարոյահոգեբանական վիճակով, առաջնորդի հմուտ կառավարման, պաշտպանունակության բարձրացման մակարդակով: Հետազոտության արդիականությունը հիմնավորվում է տարածաշրջանային ու միջազգային սպառնալիքների, ռազմական համագործակցային մեխանիզմների զարգացմամբ, ԶՈՒ կերպափոխման պահանջների խիստ չափանիշների սահմանման անհրաժեշտությամբ՝ հատկապես հրամանատարական կազմի անձնային, մասնագիտական կոմպետենտության ու սոցիալ-հոգեբանական որակների նկատմամբ, և այս համատեքստում՝ ռազմական կառավարման ոլորտում հոգեբանական գիտելիքների կիրառման ու զարգացման ոչ միայն ժամանակի պահանջով, այլև առանձնահատուկ մեթոդների ընտրությամբ, ռազմավարական և կենսական անհրաժեշտությամբ:

Ելնելով թեմայի արդիականությունից ՝ ատենախոսն իր առջև նպատակ է դրել ուսումնասիրել և վերհանել ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող հիմնական սոցիալ-հոգեբանական գործոնները:

Առաջադրել է վարկած, ըստ որի ռազմական առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող սոցիալ-հոգեբանական գործոնները պայմանավորված են գործառութային պարտականությունների, «Ցանկալի» և «Իրականում դրսևորվող» հատկանիշների տարբերությամբ, կառուցվածքային, ռազմամշակութային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ու ճգնաժամային իրավիճակներում ենթակաների սպասումների համակարգի փոխազդեցությամբ: Ենթադրվում է նաև, որ արդյունավետ առաջնորդությունը պայմանավորված է առաջնորդի հոգեբանական հատկություններով, մասնագիտական գիտելիքներով և բարոյական կողմնորոշումներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից:

Ատենախուսության ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտական նպատակը, հետազոտության հարցադրումները, նպատակից բխող խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության ընտրակազմը, մեթոդիկաները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը, հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Առաջնորդման հիմնախնդիրները կառավարման տարբեր համակարգերում» գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից՝ «Առաջնորդի իմացական կարողությունները, հաղորդակցային գործառույթները, գործառնական որակները, սոցիալ-դերային կառուցվածքներն ու ղեկավար դերերը», «Ռազմական առաջնորդության հոգեբանություն. Տեսություններ, մոդելներ և արտականոնադրային կապեր», «Վոնգի և գործընկերների տեսությունը՝ ռազմավարական հարմարվողականություն, հոգեբանական հստակություն. ապրումակցման և հուզական բանականության դերը», «Ինքնուրույնության դերը առաջնորդման արդյունավետության համատեքստում», որոնցում առաջնորդությունը ներկայացվում է որպես ազդեցության համակարգ, որը կազմակերպում է վարքագիծը և փոխազդեցությունները, վերլուծվում են Ա. Ֆայոլի, Հ. Մինցբերգի, Վ. Բեննիսի մոտեցումները, հարմարվողական առաջնորդությունը, ներկայացվում է ՀՀ կառավարման մշակույթում հաճախ նկատվող՝ առաջնորդների զգուշավոր, կաշկանդված վերաբերմունքը նախաձեռնողականության հանդեպ, քննարկվում է նաև ինքնուրույնության նշանակությունը՝ որպես առաջնորդի ոչ միայն անձնային, այլև կառավարման համակարգով պայմանավորված կառուցվածքային որակ:

Ատենախոսության երկրորդ «Առաջնորդությունը ռազմական համակարգերում» գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից՝ «Ռազմական առաջնորդության կառուցվածքը և ֆունկցիոնալ բնութագրերը», «Ռազմական միջավայրում առաջնորդ–

ենթակա փոխազդեցությունը», «Հրամանատարական առաջնորդության ռազմամշակութային գործոնները ՀՀ-ում: Առաջնորդության ճկունության հիմնախնդիրը, «լռակյաց գիտելիքը», որպես կառավարման ինտուիտիվ բաղադրիչ», «Արհեստական բանականությունը ռազմական առաջնորդության մեջ՝մարդ-մեքենա համակարգում», որոնցում ռազմական առաջնորդությունը, համաձայն Ա. Ֆայոլի և Ա. Ուրբանովիչի, ներկայացվում է կառավարման առավել պահանջկոտ ձևերից՝ հիմնված հիերարխիկ կառուցվածքի, կարգապահության և պատասխանատվության բարձր մակարդակի վրա: Վերլուծվում են ռազմական միջավայրում առաջնորդ–ենթակա փոխազդեցության առանձնահատկությունները՝ ընդգծելով, որ առաջնորդի ազդեցությունը հիմնվում է ոչ միայն լեգիտիմ իշխանության, այլև ենթակաների վստահության վրա: Հրամանատարը համադրում է ավտորիտար և ժողովրդավարական ոճերը՝ խորհրդակցելով որոշման փուլում և գործելով վճռականորեն իրագործման պահին: Ներկայացվում է հրամանատարական առաջնորդությունը ՀՀ-ում՝ պայմանավորված ազգային ռազմամշակույթով, պատմական հիշողությամբ և սոցիալ-հոգեբանական կոդերով. հրամանատարը դիտվում է որպես իշխանության մարմնավորում, արժեհամակարգի կրող և հասարակական հենասյուն: Վերջին ենթագլխում ներկայացվում է, թե ինչպես է ԱԲ-ը վերափոխում ռազմական առաջնորդության էությունը՝ բարելավում որոշումների արագությունն ու ճշգրտությունը, սինթեզում մարտադաշտի տվյալները, օժանդակում կիբեռպաշտպանությանը և ինքնավար համակարգերի կառավարմանը, սակայն չի փոխարինում առաջնորդին, այլ ընդլայնում է նրա ներուժը՝ չզրկելով մարդկային ինտուիցիայից, ապրումակցումից և բարոյական դատողությունից:

Ատենախոսության երրորդ՝ «ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարում ապահովող սոցիալ-հոգեբանական գործոնների փորձարարական հետազոտություն» գլուխը կազմված է երեք ենթագլուխներից՝ «Կիրառված մեթոդների նկարագիրն ու հիմնավորումը և հատկանիշների ընտրության և հարցաշարերի կառուցման ընդհանուր սկզբունքները», «Հետազոտության ընտրանքը և փուլերը: Լեքսիկական համեմատական հետազոտությունից ստացված արդյունքների սոցիալհոգեբանական վերլուծություն», «Հայ սպայի, որպես ռազմական առաջնորդի մոդելը», որոնցում ներկայացված են ընտրված մեթոդի նկարագրությունը, 7

գործիքների միջոցով ձեռք բերված արդյունքներն ու դրանց վերլուծությունը, ռազմական ոլորտի իդեալական առաջնորդի հայկական մոդելը՝ ձևավորված «Ցանկալի» և «Իրականում» հետազոտության արդյունքների համադրված պատկերի հիման վրա:

Իրականացնելով ծավալուն փորձարարական ուսումնասիրություն՝ ատենախոսը հանգել է եզրակացությունների, ըստ որի հաստատել է առաջադրված վարկածը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 9 հոդվածներում:

Սեղմագիրն ամբողջությամբ արտահայտում է ատենախոսության բովանդակությունը:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ այնուամենայնիվ, ցանկանում ենք նշել որոշ դիտարկումներ, որոնք առավել մանրամասն պարզաբանման կարիք ունեն: Մասնավորապես՝

1. Հետազոտության խնդիրների շարքում առանձնացված է «ինքնուրույնության դերի վերլուծությունը կառավարման արդյունավետության համատեքստում», սակայն աշխատանքի փորձարարական հետազոտության մեջ ինքնուրույնությունը որպես առանձին ուսումնասիրվող ցուցանիշ ներկայացված չէ, հստակեցված չեն դրա ուսումնասիրման մեթոդը և ստացված էմպիրիկ արդյունքները: Հետևաբար պարզաբանման կարիք ունի, թե հետազոտության ո՞ր տվյալների հիման վրա է ատենախոսը եզրակացրել ինքնուրույնության և օպերատիվ նախաձեռնողականության նկատմամբ զգուշավորության առկայության մասին:
2. Նպատակահարմար կլիներ ավելի հստակ հիմնավորվեր հետազոտության ընտրանքը՝ ներկայացնելով մասնակիցների ընտրության չափանիշներն ու ընտրանքի ձևավորման ընթացակարգը, ինչպես նաև քաղաքացիական և ռազմական խմբերի համադրելիության սկզբունքները:
3. Հետազոտության վարկածը բավական ընդգրկուն է և ներառում է արդյունավետ կառավարումը պայմանավորող մի շարք տարաբնույթ գործոններ, որոնցից ոչ բոլորն են փորձարարական ճանապարհով ստուգված:

Մասնավորապես, վարկածում առանձնացվում է ճգնաժամային իրավիճակներում ենթակաների սպասումների համակարգի փոխազդեցությունը, մինչդեռ փորձարարական հետազոտության մեջ ներկայացված չեն ենթակաների սպասումների ուսումնասիրման համապատասխան մեթոդը, ցուցանիշները և դրանց վերլուծության արդյունքները:

4. Հաշվի առնելով հետազոտության նպատակը և առաջադրված խնդիրները, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթը՝ նպատակահարմար կլիներ հետազոտական գործիքակազմում ներառվեին առաջնորդի անձնային և սոցիալ-հոգեբանական որակները գնահատող ստանդարտացված հոգեախտորոշիչ մեթոդիկաներ, ինչպես նաև դրանց փոխկապվածությունը և համադրությունը բացահայտող վիճակագրական վերլուծության մեթոդներ:
5. Աշխատանքի կարևոր և հետաքրքիր արդյունքներից է հայ սպայի՝ որպես ռազմական առաջնորդի մոդելի մշակումը, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Միաժամանակ, նպատակահարմար կլիներ առավել հստակ ներկայացվեր մոդելի փորձարարական հիմնավորման և կառուցման ընթացակարգը: Մասնավորապես, հետազոտության մեթոդական գործիքակազմում նշված են փորձագիտական հարցումը, զրույցը, սակայն փորձարարական մասում հստակ ներկայացված չեն դրանց կազմակերպման, ստացված տվյալների մշակման և վերլուծության արդյունքները, ինչպես նաև դրանց ներդրումը առաջարկվող մոդելի կառուցման մեջ:

Հիմք ընդունելով թեմայի արդիականությունը, կատարված հետազոտության ծավալը, կիրառական նշանակությունը՝ ԼՈՒՍԻՆԵ ՎԱՍԻԼԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻ՝ «ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ» **ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական**

աստիճանի հայցման ատենախոսությունը համարել համապատասխան ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, այսինքն՝ «**ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն»**» մասնագիտությամբ կարևոր խնդրի լուծում, իսկ Լուսինե Չիլինգարյանն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ. Հ. Պետրոսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Ավագյան

Ամբիոնի վարիչ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս. Հ. Պողոսյան